Լավությո՛ւն արա, ջուրը գցիր՝ մի օր առջևդ կգա:

ԲԱՐԵԳՈՐԾ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ «ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»

BAREGORTS 2022, № 4 (56) БАРЕГОРЦ

ՀԵՐԹԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԱՐՑԱԽ

Հիմա բազմակի դժվարացել է, եթե չասենք անհնար է դարձել դեպի Արցախ երկկողմ երթևեկությունը. պատկերացնենք՝ ադրբեջանցի սադրիչներ, որ ռուս խաղաղապահների՝ հաճախ անզոր աչքի առաջ ամեն րոպե կարող են փակել կամ կտրել Լաչինի միջանցքի՝ Արցախը Հայաստանին կապող միակ կյանքի ճանապարհը: Բերձորը շրջանցող նոր բայց վտանգավոր այդ ճանապարհն արագորեն կառուցվեց և պայմանաժամկետից շուտ շահագործվեց, որովհետև անցնում է մեզնից գրավված բարձունքներում տեղակայված ադրբեջանական կրակակետերի տակով:

Դա արվեց նաև ռազմավարական կարևորագույն հանգույցը՝ Բերձոր քաղաքն Ադրբեջանին հանձնելու նպատակով: Ռազմավարական կարևորագույն նշանակությամբ այդ քաղաքով ու նրա շրջակայքով են անցնում Հայաստանից Արցախին մատակարարվող գազի խողովակաշարը, բարձրավոլտ էլեկտրական հոսանքագիծը և ինտերնետային կապ ապահովող մալուխը, ինչպես և Շուշին մատակարարող խմելու նոր ջրատարը: Ինքնին հասկանալի է՝ սրանք ևս անցան թշնամու վերահսկողությանը, և հիմա տմարդի Բաքվի «բարեհաճությունից» է կախված՝ Արցախում հոսանք կլինի՞, թե ոչ, գազ կլինի՞, թե ոչ, ինտերնետային կապ կլինի՞, թե ոչ:

Այս պայմաններում արդեն մի քանի անցակետերում ռուս խաղաղապահների՝ անձը հաստատող փաստաթղթերի և ուղևորների ինքնության ոչ հաճելի ստուգումները ավելորդ ձևականություններ են:

Բայց որքան էլ դժվար լինեն ճանապարհի անհարմարությունները, հայ մարդը իր տուն է գնում, և արհեստական արգելքները անհաղթահարելի խոչընդոտ չեն կարող լինել: Առավել ևս, երբ հոկտեմբերի 23-ին մեր Արցախ ուղևորությունն իրականացվում էր գյուղական սահմանապահ դպրոցների ուսուցիչներին դրամական պարգև հանձնելու հաճելի պարտականության նպատակով:

Այս անգամ մեր ուղեկիցը կանադահայ Արտո-Պերճ Մանուկյանն էր՝ Թեքեյան մշակութային միության Հյուսիսային Ամերիկայի և Կանադայի մասնաճյուղի ներկայացուցիչը:

Դեռևս անծանոթ էինք: Նա մեզ միացավ Եղեգնաձորում: Հենց ավտոմեքենայում հասկացանք, որ նա հաղորդակցվող, հաճելի զրուցակից է, և ամբողջ ճանապարհին չզգացինք, որ Արցախ ենք մեկնում օտարաբնակ՝ կանադացի հայի հետ:

Ծրարներ, որոնք պարունակում էին նշված քանակով ուսուցիչներին տրվող դրամական պարգև-հավելավճարները

Բարեգործական պտուղներից մեկը: Մեր պատվիրակությունը "100 տուն Արցախում" ծրագրով Երևանի պետական համալսարանի կառուցած տան բակում

Մի խումբ էինք, մի մարդատար մեքենայի ուղևորներ, մի ազգից էինք միասնական, մեկ նպատակով: Երկա՛ր,ոլորապտույտ ճանապարհը տանում է հայրենակիցների՝ հարազատների մոտ: Իսկ հարազատները, որոնց բազմիցս էինք հանդիպել, Մեծ Շեն, Հին Շեն, Լիսագոր, Եղցահող, Դահրավ գյուղերում են (մինչև թշնամուն հանձնելը նաև Աղավնո գյուղում), ուսուցիչներ, որոնք դժվարին պայմաններում, թշնամու լպիրշ ու սադրիչ հայացքի տակ հերոսաբար հայ երեխաներ են կրթում ու դաստիարակում հիշյալ հայ գյուղերի դպրոցներում:

Այս անգամ ուսուցիչներին դրամական պարգևհավելավճար տրամադրել էր Թեքեյան մշակութային միության Հյուսիսային Ամերիկայի և Կանադայի մասնաճյուղը: Գյուղական համայնքներում ամեն ուսուցիչ առանձին ծրարով ստացավ իր պարգևը, և հանձնողը մեր հյուրն էր՝ Արտո Մանուկյանը, ում վստահված էր այդ հաճելի պարտականությունը: Նա իր զմայլելի արևմտահայերենով ուսուցիչներին բոլորիս ներկայությամբ հորդորում էր մեկ առ մեկ ստուգել ծրարների դրամական պարունակությունը:

Չնայած հնարավորությունների սակավությանը՝ սրտաբաց, հյուրասեր ու պարզ մարդիկ են արցախցիները, անկեղծորեն հրավիրում են իրենց հարկից ներս, բայց սուղ ժամանակը թույլ չէր տալիս ընդունել թախանձագին խնդրանքները: Միևնույն է՝ հնարավոր չեղավ խուսափել Դահրավ ու Եղցահող գյուղերի հյուրասիրություններից:

Արցախյան քառասունչորսօրյա պատերազմի հետևանքով Հադրութի ու Շուշիի շրջանների և այլ վայրերի տեղահանված տնազուրկ արցախցիների համար է Դահրավ գյուղում իրականացվում «Հարյուր տուն Արցախում» բարեգործական ծրագիրը:

Եղանք նաև Դահրավի՝ մեր հիմնադրամի միջոցներով հիմնանորոգված մշակույթի տանը, որը ֆինանսավորել են Մեդիկ և Թիմիկ Մարտիրոսյանները:

Առանձնապես տպավորիչ էր մեր մուտքը Եղցահող, որը կայացավ համայնքապետ Արտակ Հակոբյանի օժանդակությամբ: Սովորաբար նրան հանդիպողը չի կարող Եղցահողից հեռանալ առանց հյուրասիրվելու: Արդեն ո՛րերորդ անգամ նա պատշաճորեն ընդունեց մեզ իր հյուրընկալ հարկի տակ՝ արցախյան բնաշխարհի բարիքներով ծանրաբեռ սեղանի շուրջ: Ամեն ինչ տնական էր ու բնական, սակայն ուտելիքներից ու ըմպելիքներից համեղ էր և իմաստալից զրույցը, որ ծավալվեց ընտանեկան ջերմ մթնոլորտում:

Հաճելի ուղեկցին՝ Արտո Մանուկյանին, Երևանում հրաժեշտ տվեցինք նորից հանդիպելու ակնկալիքով:

Դարհավ գյուղի դպրոցի ուսուցիչների միջավայրում: Նրանք գերադասեցին լուսանկարվել փառքի սրահում՝ հայրենիքի ազատության համար նահատակված հերոսների հետ

Ուղևորությունը բոլոր մասնակիցներին՝ Գուրգեն Մելիքյանին, Արտո Մանուկյանին, Սամվել Մուրադյանին և Աշոտ Պողոսյանին պարգևեց անմոռաց տպավորություններ:

Արցախի վտանգով լի գյուղերում անձնվիրաբար գործող բոլոր ուսուցիչները շնորհակալ էին Թեքեյան մշակութային միության՝ իրենց ուշադրության արժանացրած ազգակիցներից, ինչպես և «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին»՝ դեպի Արցախ այս ուղևորությունը կազմակերպելու համար:

Կանադացի մեր բարեկամ Արտո Մանուկյանին ճանապարհելուց մի քանի օր հետո ստացվեց «Պայքար» շաբաթաթերթում տպագրած նրա նյութը, որի լուսապատճենը ստորև ներկայացնում ենք «Բարեգործի» ընթերցողներին:

«ԹԷՔԷԵԱՆ»Ը ԿԸ ՀԱՍՆԻ ԱՐՑԱԽ

Հոկտեմբեր 22 եւ 23 ին փրոֆէսէօր Գուրգէն Մելիքեանի ղեկավարութեամբ եւ մասնակցութեամբ փրոֆէսէօր Սամուէլ Մուրատեանի եւ Գանատայէն ԹՄՄ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ Արթօ Մանուկեանի առաքելութեամբ մը ուղղուեցաւ Արցախ:

Փրոֆ. Մելիքեանի այսպէս կոչուած «Գուրգէն Մելիքեանի Քաշաթաղ բազմազաւակ ընտանիքներին հիմնադրամի» հերթական այցն էր Արցախ:

Առաքելութիւնը միտում ունէր Արցախեան հինգ գիւղերու ուսուցչական կազմերուն հասցնել նիւթական օժանդակութիւն:

Առաւօտեան Երեւանէն մեկնելով, կէսօրէ ետք հասանք նախապէս ծրագրուած գիւղական մեր այցելութեանց:

Յուզումնալից ճամբորդութիւն մըն էր, որ կը կատարէինք, Հայաստանէն բաժնուած Արցախ կ'ուղղուէինք, նորակառոյց ազերիական ճանապարհով, ուր կը տեսնէինք յանձնուած դատարկ ու հայկական հիմնադրամի միջոցներով մեր կառուցած Բերձորի ընբանցքը՝ տեսնելով բարձրունքներէն մեզ հսկող Ազերի զինոյժը:

Աւաղ մեր աչքին առջեւ կը պարզուէին հին ճանապարհը, Աղաւնուն ու Բերձորը պարապ եւ ամայի:

Առաջին օրը յաջորդաբար այցելեցինք «Հին Շէն» գիւղի 13 նպաստաւոր, «Մեծ Շէն» գիւղի 12 նպաստաւոր, «Լիսագոր» գիւղի 17 նպաստաւոր, «Եղցահող» գիւղի 21 նպաստաւոր:

Ստեփանակերտ գիշերելէ յետոյ, յաջորդ առաւօտ ուղղուեցանք «Դահրաւ» գիւղ մեր նպաստը հասցնելու թիւով 25 հոգինոց ուսուցչական կազմին:

ԹՄՄ-ի «Հովանատրէ Ուսուցիչ մը» ծրագրի օժանդակութիւնն էր որ կը ֆինանսաւորէր այս առաքելութիւնը: ԹՄՄ-ի Ամերիկայի եւ Գանատայի վարչական եւ Արթօ Մանուկեանի ներկայութեամբ իրականացաւ այս առաքելութիւնը:

Բոլոր գիւղերուն մէջ ալ փրոֆ. Մելիքեան եւ Մուրատեան ինչպէս նաեւ Արթօ Մանուկեան գնահատեցին շահառուներու նուիրումն ու յամառ կեցուածքը՝ չլքելով Արցախը: Դրուատեցինք իրենց հայրենանուէր դիրքորոշումը որ չլքելով Արցախն պաշտպան կը կանգնին մեր պապենական հողերուն:

Վերադարձի ճամբուն, կանգ առինք նորակառոյց ճանապարհին սիմպոլիք ձեւով ընկոյզի հունդեր զետեղեցինք:

Փրոֆ. Մելիքեանի հիմնադրամը նախապէս 10 000 ընկուզենի ցանած էր յանձնուած հողերուն մէջ: Ահա այս ճանապարհորդութեան ընթացքին՝ սկըսան առաջին հինգ ընկուզենիներով:

ԱՐԹՕ ՄԱՆՈՒԿԵԱՆ

«ՈՍԿԻ ՍԵՐՄԵՐ». ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԳԱՆՔԻ ԿՐԹԱՄՐՑԱՆԱԿՆԵՐ

«ՈՍԿԻ ՍԵՐՄԵՐ. երախտագիտության և հարգանքի կրթամրցանակներ» *ծրագիրը «Հայ Զմեռ պապ» լրագրողական բարեգործական հիմնադրամի արձագանքն էր, հարգանքի տուրք՝ Արցախյան 44-օրյա պատերազմում զոհված համալսարանականների հիշատակին: Մի ամբողջ ոսկի սերունդ՝ հազարավոր պայծառ երիտասարդներ, իրենց կյանքը նվիրեցին Հայաստանի և Արցախի Հանրապետությունների պաշտպանության գործին: Հանուն մեր պետականության հերոսաբար մարտնչած արիության և*

Մեկ րոպե լռությամբ խոնարհում զոհված համալսարանականներինների հիշատակին

հայրենատիրական բացառիկ սխրանքներ գործած երիտասարդների սովորած բուհերում նրանց անուններով կրթամրցանակներ ստեղծելով՝ նպատակ դրվեց ոչ միայն արձանագրել Արցախյան գոյամարտի ընթացքում զոհված հերոսների սխրանքը, այլև այդ երիտասարդ նվիրյալների անունները շաղկապել մեր երկրի կրթության և գիտության առաջընթացին: Հիմնադրամի ծրագրային առաջարկին արձագանքեցին ՀՀ 4 բուհեր՝ Երևանի պետական համալսարանը, Հայաստանի ամերիկյան համալսարանը, Երևանի պետական կոնսերվատորիան, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը: Այս պահին գործող մրցանակների թիվը 9-ն է, և լիահույս ենք, որ բարերարների աջակցությամբ այն կավելանա:

ԵՊՀ 6 կրթամրցանակներից մեկը, որը գործում է արևելագիտության ֆակուլտետում, նվիրված է եզդի հերոսների հիշատակին: Մեր եզդի եղբայրները պատերազմին մասնակցել են ոչ միայն որպես զինապարտներ, այլև կամավորական 2 ջոկատ են կազմել և հայերի հետ միասին հերոսաբար մարտնչել են թշնամու դեմ: Այս մրցանակը սահմանելու գաղափարը, որը ծնվել է արևելագիտության ֆակուլտետի լեգենդի՝ բ.գ.թ., պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանի հետ երկար քննարկումից հետո և արժանացել է ֆակուլտետի դեկան, պ.գ.դ., պրոֆ. Ռուբեն Մելքոնյանի հավանությանն ու աջակցությանը, մեր երախտագիտության տուրքն է եզդի հերոսների հավատարմությանն ու քաջությանը:

Յուրաքանչյուր կիսամյակ արևելագետ ուսանողները հնարավորություն են ստանում մասնակցելու նախապես հայտարարված մրցույթին՝ ներկայացնելով իրենց ինքնակենսագրականները, բնութագրական նամակները և գիտական ստեղծագործական աշխատանքների ցանկը: Կրթամրցանակների ընտրության թափանցիկ ընթացքն ապահովվում է արևելագիտության ֆակուլտետի դասախոսներից և «Հայ Զմեռ պապ» հիմնադրամի ներկայացուցիչներից կազմված հանձնախմբի միջոցով: Կրթամրցանակի հավակնորդներից հաղթում են այն ուսանողներ/ասպիրանտները, որոնց ցուցանիշները հա-

Եզդի հերոսների հիշատակին նվիրված "Ոսկի սերմեր" կրթամրցանակի մրցութային փուլն ամփոփում են ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի նախկին և ներկա դեկանները՝ պրոֆ. Գ. Մելիքյանն ու պրոֆ. Ռ. Մելքոնյանը

մապատասխանում են հետևյալ չափորոշիչներին. առաջադիմություն, նորարար միտք, քաղաքացիական դիմագիծ, եզդի համայնքի հետ կապ պահպանելու և այնտեղ կրթական ծրագրեր իրականացնելու պարտադիր հանձնառություն:

Շուտով կկայանա «Ոսկի սերմերի» արդեն 3-րդ մրցույթը: Ամերիկաբնակ բարերար դ-ր Անահիտ Տեր-Ստեփանյանի՝ հերոս եզդիների կրթամրցանակի համար սահմանած մրցանակային ֆոնդը նախորդ մրցանակաբաշխությունների ժամանակ եռապատկել է «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը»: Ընդ որում՝ խրախուսական մրցանակների են արժանացել ոչ միայն արևելագետ, այլև հայ բանասիրության ֆակուլտետում գործող, Վարդան Ամալյանի խնկելի հիշատակին նվիրված կրթամրցանակի հավակնորդ բանասեր ուսանողները:

Կրթամրցանակների շրջանակի ընդլայնումն իրականացավ շնորհիվ այն բանի,որ «Հայ Զմեռ պապ» և «Գուրգեն Մելիքյան» հիմնադրամները բարեգործության նույն սկզբունքներն ունեն: «Այն, ինչ տվեցիր, քոնն է հավիտյան, Այն, ինչ պահեցիր, կորած է հավերժ».– շուրջ 30 տարի այս է Հայաստանի և Արցախի Հանրապետություններում տասնյակ բարեսիրական ծրագրերի հեղինակ, մայր հայրենիքում և սփյուռքում անբասիր

համբավ ու հեղինակություն վայելող Գուրգեն Մելիքյանի հերոսական կյանքի փիլիսոփայությունը՝ օրինակ ու նշաձող և՛ բարեգործության ոլորտի մարդկանց, և՛ կյանք մտնող ուսանողների համար:

ԵՊՀ-ում արդեն ավանդույթ է դարձել կրթամշակութային միջոցառումների ամփոփման արարողությունը վերածել պատերազմի հերոսների հիշատակը հարգելու և նրանց սիրանքը փառաբանելու միջոցառման:

Կրթամշակութային արարողությունների ժամանակ հնչում են բուհի անմահացած ուսանողների կիսատ թողած գործը շարունակելու, Հայաստանը գիտահենք, զարգացած երկիր դարձնելու կարևոր պատգամներ: Հատկանշական է ԵՊՀ ռեկտոր, պ.գ.դ. Հովհաննես Հովհաննիսյանի խոսքն ուղղված կրթամշակութային կիրառներին. «Դուք սա պետք է չդիտարկեք որպես հավելյալ եկամուտ. սա եկամուտ չէ, այլ պարտավորություն է ձեր ուսերին, որ էլ ավելի բազմապատկեք ձեր ջանքերը սովորելու ուղղությամբ»:

Արևելագիտության ֆակուլտետի դեկան, պ.գ.դ., պրոֆ. Ռուբեն Մելքոնյանն իր խոսքում նշեց, որ այս դրամաշնորհներն իրենց մեջ բարոյական և հոգեբանական առումով շատ մեծ խորհուրդ են պարունակում. «Այն ուսանողները, ովքեր ստանում են այս մրցանակները, երկու առումով են պարտավորված՝ կայանալ որպես լավ մասնագետներ, շարունակել հիշել այն գործը, որին իրենց կյանքն են նվիրել իրենց հասակակիցները կամ իրենցից մեծ, փոքր եղբայրները, այսինքն՝ այս մրցանակն իր մեջ պարունակում է հիշելու շատ կարևոր խորհուրդ՝ հիշելու այդ հերոսներին և հիշելու այն գաղափարը, որի համար այդ հերոսները զոհվեցին, հիշելու՝ այդ գաղափարը մոռացության հանկարծ չտալու համար, հիշելու՝ այդ գաղափարն անտեսողների և սխալ ճանապարհի քարոզողների ձեռքը բռնելու ու կասեցնելու համար»:

«Հայ Ձմեռ պապ» բարեգործական հիմնադրամի տնօրեն Արմինե Պետրոսյանը շեշտադրեց նաև կրթամշակութային մրցանակների գաղափարի լուսաբանման կարևորությունը. մի կողմից՝ անմահացած հերոսների կենսագրության արժևորման, մյուս կողմից՝ կյանքի իմաստի փնտրտուքի ու արհավիրքն արժանապատվորեն հաղթահարելու ճանապարհին կանգնած հայրենատեր երիտասարդների գործունեության լուսաբանումները կարող են մոդել-օրինակներ դառնալ ետպատերազմական ժամանակի բազմաթիվ երիտասարդների համար:

Շատ կարևոր է, որ մրցանակի արժանացած ուսանողներն իրենց օրակն են ավելացնում բարեգործության շղթայական, ցանցային ծրագրերին. ի նշան երախտագիտության՝ արևելագետ-ուսանողները եզդիաբնակ Շամիրամ գյուղում սկսել են իրականացնել «Երկու ազգ, մեկ հայրենիք՝ Հայաստան» կրթամշակութային ծրագիրը:

«Մեզ թաղեցին, բայց չգիտեին, որ մենք սերմեր ենք». *սա է «Ոսկի սերմեր. երախտագիտության և հարգանքի կրթամշակներ» ծրագրի կարգախոսը: Մրցունակ կրթությունն ու գիտությունն են այն հիմքերն ու հենասյուները, որոնց վրա պետք է կառուցվի Հայաստանի ապագան: Այս մասին են երազել մեր անմահացած հերոսները՝ մեր ոսկի սերմերը:*

Մենք նրանց զարգացող Հայրենիք ենք պարտք:

ԱՐՄԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ
«Հայ Ձմեռ պապ» բարեգործական
հիմնադրամի տնօրեն
www.haysanta.am
https://www.facebook.com/haysanta01/
Հեռ.՝ (374 55) 51 79 13

Վարդան Ամայանի հիշատակին նվիրված կրթամշակութային քննարկման ամփոփումը ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում: Առաջին շարքում, ձախից երկրորդը զոհված հերոսի մայրն է, երրորդը՝ հայրը՝ ազատամարտիկ, նշանավոր երգիչ-երգահան Դավիթ Ամայանը:

2022 թ.նոյեմբերից ցայսօր ստացված օգնություններ

(Նախորդ համարներում տպագրված ցուցակների շարունակությունը)

№	Ամսաթիվ	Անուն, ազգանուն	Օգնության տեսակ	Գումարը ՀՀ դրամով	Գումարը ԱՄՆ դոլարով
20	11/8/2022	Արբի, Արին, Լինա Նազարյաններ	Օգնություն	117750	300 USD
21	11/8/2022	Ֆլորա Սարյան	Օգնություն	157000	400 USD
22	11/15/2022	Պարզյան Սիրամարգ	Օգնություն	10000	
23	11/28/2022	Վարդուհի Ներսիսյան	ԽԵԱ ծրագիր	196500	500 USD
24	11/30/2022	Մելիքյան Գուրգեն	Անմոռանալի, անչափ սիրելի Մարգո Օհանյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	20000	
25	11/30/2022	Լևոն Չուգասզյան	Օգնություն գրքերի ծրագիր	50000	
26	12/14/2022	Պարզյան Սիրամարգ	Օգնություն	10000	
27	12/15/2022	Պողոսյան Աշոտ	Գրքերի ծրագիր	19700	
28	12/15/2022	Անոնիմուս Ա.Բ.	Օգնություն գրքերի ծրագիր	80000	
29	12/15/2022	Երևանի գարեջուր ՓԲԸ	Օգնություն	1000000	
30	12/19/2022	Արամ և Տիգրան Խաչատրյաններ	Օգնություն	60000	
31	12/21/2022	Հակոբ Գույումջյան	Օգնություն	117900	300 USD
32	12/26/2022	Կիրակոս Գույումջյան	Օգնություն	120000	
		Ընդամենը՝		**1958850**	**1500 ԱՄՆ դոլար**

2022 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին անվանական կրթաթոշակ ստացածների ցուցակ

1	10/25/2022	ԵՊՀ հիմնադրամ	Նազելի և Դավիթ Չարչյանի անվան կրթաթոշակ, Գասպարյան Աննա, ֆարմացիա, 4-րդ կուրս	30000
2	11/15/2022	ԵՊՀ հիմնադրամ	Նազելի և Դավիթ Չարչյանի անվան կրթաթոշակ, Գասպարյան Աննա, ֆարմացիա, 4-րդ կուրս	30000
3	12/13/2022	ԵՊՀ հիմնադրամ	Նազելի և Դավիթ Չարչյանի անվան կրթաթոշակ, Գասպարյան Աննա, ֆարմացիա, 4-րդ կուրս	30000
4	10/25/2022	ԵՊՀ հիմնադրամ	Ստեփան Ալաջաջյանի անվան կրթաթոշակ, Միրաքյան Էլեն, հայ բանասիր. 4-րդ կուրս	30000
5	11/15/2022	ԵՊՀ հիմնադրամ	Ստեփան Ալաջաջյանի անվան կրթաթոշակ, Միրաքյան Էլեն, հայ բանասիր. 4-րդ կուրս	30000

6	12/13/2022	ԵՊՀ հիմնադրամ	Ստեփան Այաջաջյանի անվան կրթաթոշակ, Միրաքյան Էլեն, հայ բանասիր. 4-րդ կուրս	30000
7	10/25/2022	ԵՊՀ հիմնադրամ	Խորեն Պալյանի անվան կրթաթոշակ, Հայրապետյան Անգելինա, հայ բանասիր 3-րդ կուրս	20000
8	11/15/2022	ԵՊՀ հիմնադրամ	Խորեն Պալյանի անվան կրթաթոշակ, Հայրապետյան Անգելինա, հայ բանասիր 3-րդ կուրս	20000
9	12/13/2022	ԵՊՀ հիմնադրամ	Խորեն Պալյանի անվան կրթաթոշակ, Հայրապետյան Անգելինա, հայ բանասիր 3-րդ կուրս	20000
10	10/25/2022	Ա. Բաբաջանյանի անվ երաժշ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվան կրթաթոշակ, Մարտիրոսյան Անահիտ	10000
11	10/25/2022	Ա. Բաբաջանյանի անվ երաժշ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվան կրթաթոշակ, Անդրեասյան Ալբերտ	10000
12	10/25/2022	Ռ. Մելիքյանի անվան երաժշտ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվան կրթաթոշակ, Մանուկյան Ալիսա	10000
13	10/25/2022	Կոմիտասի անվ.պետ. կոնսերվատորիա	Լուսինե Զաքարյանի անվան կրթաթոշակ, Սիմոնյան Լիանա	10000
14	10/28/2022	Ծ Ազնավուրի անվ. մշակ. և արվեստի պետ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվան կրթաթոշակ, Ստեփանյան Եսթեր	20000
15	11/15/2022	Ծ Ազնավուրի անվ. մշակ. և արվեստի պետ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվան կրթաթոշակ, Ստեփանյան Եսթեր	10000
16	11/15/2022	Ա. Բաբաջանյանի անվ երաժշ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվան կրթաթոշակ, Մարտիրոսյան Անահիտ	10000
17	11/15/2022	Ա. Բաբաջանյանի անվ երաժշ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվան կրթաթոշակ, Անդրեասյան Ալբերտ	10000
18	11/15/2022	Ռ. Մելիքյանի անվան երաժշտ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվան կրթաթոշակ, Մանուկյան Ալիսա	10000
19	11/15/2022	Կոմիտասի անվ.պետ. կոնսերվատորիա	Լուսինե Զաքարյանի անվան կրթաթոշակ, Սիմոնյան Լիանա	10000
20	12/13/2022	Ծ Ազնավուրի անվ. մշակ. և արվեստի պետ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվան կրթաթոշակ, Ստեփանյան Եսթեր	10000
21	12/13/2022	Ա. Բաբաջանյանի անվ երաժշ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվան կրթաթոշակ, Մարտիրոսյան Անահիտ	10000
22	12/13/2022	Ա. Բաբաջանյանի անվ երաժշ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվան կրթաթոշակ, Անդրեասյան Ալբերտ	10000
23	12/13/2022	Ռ. Մելիքյանի անվան երաժշտ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվան կրթաթոշակ, Մանուկյան Ալիսա	10000
24	12/13/2022	Կոմիտասի անվ.պետ. կոնսերվատորիա	Լուսինե Զաքարյանի անվան կրթաթոշակ, Սիմոնյան Լիանա	10000

Դահրավ գյուղի դպրոցի հյուրընկալ աշխատողների հետ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ Ս. Պ., բ. գ. դ., պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ

ԱՎԱԳՅԱՆ Ա., բ. գ. դ., պրոֆեսոր
ՄԵԼԻՔՅԱՆ Գ., բ. գ. թ., պրոֆեսոր
ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼ., պ. գ. թ,, պրոֆեսոր

Շարվածքը և ձևավորումը՝ Ս. Մուրադյանի:
Տպաքանակը՝ 99:

Թերթը բաժանվում է անվճար:
Հասցեն՝ Երևան 0025, Աբովյան 52 Ա, հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 212 սեն.:
Հեռ. 060710617; 055522936, 552537, 060522936